Մարո Մարգարյան

Մայրիկիս

«Դու մեզ հետ էիր և երազ դարձար...»

Դու մեզ հետ էիր և երազ դարձար,
Երբ առկայծում էր պաղ վառարանի
Կրակը վերջին:
Մենք մենակ էինք փոքրիկ ու տկար,
Եվ դու գնացիր այնքան հուսաբեկ,
Այնքան հուսախաբ
Բախտից ապիկար,
Երբ առկայծում էր պաղ վառարանի
Կրակը վերջին:
Բայց ապրեցինք մենք ու հասակ առանք,
Ու հասակ առավ, ամրացավ մեզ հետ
Երկիրը մեր ջինջ:
Գիտնական դառած հիմա որդին քո,
Չափում, ձևում է
Աստղերի հեռուն,
Իսկ ես պոետի անեղծ բերկրանքով
Կյանքն եմ ներբողում
Իմ լույս երգերում:
Բայց նրա անհուն երկնակամարում,
Մի աստղ է անվերջ փայլում ու մարում,

Իսկ իմ երգերում՝ ջերմ ու սրտաշող,
Ծխում է անվերջ հարազատ մի տող:
«Մենակ մի օր լուռ ու մունջ...»
Մենակ մի օր լուռ ու մունջ
Ել, կանգնիր իմ դեմ.
Մենակ մի օր մոր աչքով
Հոգուս մեջ նայիր:
Ինչ ունեի ողջ առան,
Բայց ինչ տվին, չգիտեմ
Մենակ մի օր,
Գեթ մի օր
Մայր ունենայի:
Մենակ մի օր քո կյանքի
Աստղիկը շողար,
Միշտ կարոտ ու կարկամած
Հոգուս երկնքում.
Ես աշխարհի հրկիզվող
Բերկրանքը թողած,
Սրտիս բոլոր ծալքերով
Լաց լինեի քո գրկում:
Այս երազը երկնային
Թող ինձ կյանքը տա,
Ես լաց լինեմ աշխարհում,
Աշխարհը խնդա.
Մենակ մի օր լուռ ու մունջ
Ել, կանգնիր իմ դեմ:
«Ասում են թե մահամերձ...»
Ասում են թե մահամերձ
Մայրս վերջին իր շնչում
Լուռ խնդրել է ինձ իր մոտ...

Չգիտեմ ինչու...
Նայել է բորբ արևին
Ու ցույց տվել ինձ,
Բայց շուրթերից
Սառն ու փակ
Չի լսվել ոչինչ:
Պառավ կանայք են եղել
Վճռել են լռին,
Որ խնդրում է արևին
Ինձ որդեգրի:
Մահը թողել ինձ հեռու
Փարվել է նրան
Վերջալույսն է ծունր իջել
Սնարի վրա:
Հիմա պայծառ արևին
Մայր եմ ասում ես,
Որ նայի ինձ մոր նման
Սրտավառ ու կեսը
Եվ գուցե թե ինձ ասի
Որևէ մի օր,
Խոսքերը փակ շուրթերի
Անամոք իմ մոր:

ԲՈԼՈՐ ՄԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Թողնեմ ես մի պահ իմ ջռայլ սերը
Եվ անցուդարձը ողջ աշխարհի,
Երգեմ մայրիկիս մաշված մատները,
Հայացքը՝ հոգնած, դեմքը՝ բարի:
Թողնեմ ես մի պահ իմ շռայլ սերը,
Ուրախ ցերեկը մեր փողոցի,
Երգեմ հոգնած մոր անքուն գիշերը՝

Չոքած առջևը օրորոցի:
Եվ ամենօրյա լուռ այն հոգսերը,
Որոնց մանրուք են միշտ անվանում,
Եվ որոնց համար վաստակողները
Ոչ մի աստիճան չեն ստանում:
Որ անսկիզբ են, անվերջ են, անծայր,
Անձև, աննկատ ու անանուն,
Որով իր տան մեջ ամեն մի մայր
Աշխարհն է ուսին առած տանում:
Թողնեմ ես երգի բոլոր ձևերը,
Մարդկանց հույզերը, կոչումն ու դերը,
Թողնեմ արևն ու աշխարհը լայն,
Երգեմ մայր կոչվող
Անհատնում սերը,
Ամենավե՛ր՝
Աշխարհում այն:
«Ամեն մեկիս...»
Ամեն մեկիս
Հոգու խորքում
Ջինջ մի ակունք,
Պարզ մի կոհակ,
Մաքուր
Մի հուն է հարկավոր,
Մի ապավեն
Ուղիղ, շիտակ,
Կուռ մի հավատ
Խորունկ ու տաք,
Հոգու խորքում
Լույսի մի ջահ,
Պահող

Մի սյուն է հարկավոր:
Ի՞նչ ենք այսպես
Հասնում երկինք,
Տիեզերքներ
Տալիս իրար,
Հրաբխում
Հազար գույնով,
Ու փշրված
Գավ ի իրար:
Երկար-երկար
Այս հին կյանքում,
Դարեր քաշող
Տառապանքում
Ամեն մեկիս
Մի ճառագայթ
Երջանկություն է հարկավոր: